

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻԿԻ**ՀԵՌԱԳԻՏՐԱՆԵՐ**

Քիր. Տ. Եղիշ Ա. Արք. Տերերեան
Պատրիարքական Տեղապահ
Առաք. Ա. Արուսոյ
Երուսաղեմ

Անակնկալ եւ կոկծալի մաճք Եւրոպայի Հայոց Կաթողիկոսական Նուիրակ Գիր. Տ. Արտաւագդ Ս. Արք. Սիւրմէեանի մեզի խոր ցաւ պատճառեց. կը հրահանգենիք մատուցանել հանգստեան հանդիսաւոր Ս. Պատարագ, յարգել իր յիշատակը ներկայացնելով իր գրական, բանասիրական, եկեղեցական, վարչական եւ ազգային ծառայութիւնները: կը հայցենիք Ս. Հոգիին միսիթարութիւնը իր արենակիցներուն, հօտին, եւ համայնքեղեցական դասուց:

Գլուխ Զ.**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

10 Հոկտ. 1951

Ս. Էջմիածին - Հայաստան

Արտաւագդ Մթբազանի մահուան առքի Փոխանակուած նեռազիրեներ

Բարիք, 28 Սեպտ. 1951

Հայոց Պատրիարքարան

Երուսաղեմ

Հայ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը կը լիծով կը տեղեկացնէ մահը՝ Սիւրմէեան Սրբազանի որ տեղի ունեցաւ կարճատև հիւանդութենէ մը վերջ, 27 Սեպտեմբեր ժամը 14 ին:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Երաւանեամ, 29 Սեպտ. 1951

Հայ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւն

Բարիք

Սրբոց Յակոբիանց Միաբանութիւնը եւ խորունկ ցաւով տեղեկացանք Սիւրմէեան Սրբազանի անսպասելի մահը. Տէրը թող դասէ իր հոգին անմահներու կարգին:

ՍՈՒՐԵԼՆ ԵՊԻՍԿՈՊՈՅՈՍ
Վասն Պատրիարքական Տեղապահի

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԿՏ - ԲԵՐԵԿԵՄ ՀԱՅԱՀԱՅ

● Կիր. 2 Սեպտ. — Ը. օր Ականիսիման. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատուան մէջ: Օրուան պատարագին էր աւանդական սովորութեան համաձայն Ս. Յարութեան Տաճարի Տեսուչը՝ Հոգ. Տ. Հայկասեր Վրզ. Պայրամեան, և քարոզեց բնաբան ունենալով՝ Առակաց գրքէն անմասառնը՝ խուլ, կոյր և համբ է:

● ԲՀ. 3 Սեպտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գիր. Տ. Առարքն Ս. Ազու. Քէմանձնանի:

● ԳՀ. 4 Սեպտ. — Ս. Ցովակիմայ եւ Աննայի. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Յովսէփի Գերեզմանին վրայ: Պատարագեց և քարոզեց աւանդական սովորութեան համաձայն Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Կարեգին Արեդայ Քաղաքնեան:

● Եր. 8 Սեպտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գիր. Տ. Տեղապահ Ս. Հոգ:

● Կիր. 9 Սեպտ. — Գիր Գօւույ Ս. Աստածանին. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գեթեմանին Ս. Աստուածածնայ Տաճարի Ս. Կոյսի Գերեզմանին վրայ: Պատարագին էր Հոգ. Տ. Պարուժան Արք. Քապարաճեան: Հանգիստաւոր երթին և վերտարձին կը նախագահութեամբ Գիր. Տ. Առարքն Ս. Ազու. Քէմանձնան:

● Կիր. 16 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատան մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Հայրիկ Վրզ. Ասլաւանեան:

● Եր. 20 Սեպտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին հանգիստաւոր նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գիր. Տ. Առարքն Ս. Արք. Մանասեանի:

● Ուր. 21 Սեպտ. — Նմանի Ս. Աստածանի ի յԱնակ: առաւտօնեան ժամը 8ին, նախագահութեամբ Գիր. Տ. Առարքն Ս. Արքազանի, հօգեշնորհ վերգապետ հայրեր պաշտօնական թափօրույ իշան Գեթամանին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր յետ է Հրաշավառք Հանգիստաւոր մաւրիքն: Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանգիստաւորապէս պատարացեց Գիր. Տ. Առարքն Ս. Արք. Մանասեան, իսկ Հոգ. Տ. Հայկասեր Վրզ. Պայրամեան քարոզեց օրուայ տօնին խորհուրդին շուրջ:

● Կիր. 23 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Յարութեան Վրզ. Մուշեան:

● Եր. 29 Սեպտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին մեծ ահանգէ ո նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գիր. Տ. Նորայր

Ս. Եպս. Պաղաքեանի, իսկ յետ նախատօնակի Ս. Խաչափայտի մասունքը իր հանգստարանէն թափորով աւագ խորան փոխադրուեցաւ, ուրիշ հանդիսապետ Արքազանը որհնեց ներկայ հաւատացեալներու հոծ բազմութիւնը:

Իրիկնամուտին Ո. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցան և կեսցէ ու և Հակոնն արարող թիւները, հանդիսապետութեամբ Գերազատիւ Տ. Նորայր Արքազանին:

● Կիր. 30 Սեպտ. — Խաչիլեաց. Հանդիսաւոր Ս. Պատարազը մասուցաց եցաւ Ո. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ՝ Պատարազին էր Գեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողաբեան, որ նաև քարոզեց ընարան ունենալով չըր ոչ առնու զիանչ իւրի գայ զիւի իմ, չէ ինձ արքանից: Յետ քարոզի, նախազահութեամբ Գեր. Տ. Առորէն Ո. Եպս. Քէմհաննեանի, կատարուեցաւ Հայրապետական Մազմանը, ն. Ո. Օ. Տ. Գերոգ. Զ. Աղզընակի վեհափառ Կաթոլիկոսի անուանակոչութեան տանին առթիւ (ըստ նոր տօմարի), իսկ յետ Ո. Պատարազի, զարձեալ նախազառութեամբ Գեր. Տ. Առորէն Ո. Եպս. ի. Հանդիսաւոր Հոգեհանգստան ովաշտուն Մելքոնեան Հարազատաց Կարապետի և Գրիգորի, ինչպէս նաև Նորոգ Հանդ. Խերազայի Կաթող. Նուրիսակ Գեր. Տ. Արուաւզդ Ս. Արք. Արքմէնեանի հոգւացն ի Հանդիսու:

Եթեկայեան Ո. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչիլեացի մեծահանգէս անդաստանը, նախազահութեամբ Գեր. Տ. Առո-

րէն Ս. Եպս. Քէմհաննեանի, և մասնակցութեամբ Արքազան Եպիսկոպոսաց, վարդապետաց, բովանդակ ուսանողութեան և հաւատացեալներու խուռաներամբ բազմութեան, որով էր յարդէր Մայր Տաճարը մինչեւ իր գաւիթները:

Պ. Ա. Շ Տ Օ Ն Ո. Կ Ա. Խ Ք

● Եր. 15 Սեպտ. — Կ. ա. Ժամը 10.30-ին, Lord Stansgate (Chairman of the International Parliamentary Union), իր տիկնոջ հետ միասին այցելեց Գեր. Տեղապահ Ս. Հօր և Հիւրասիրուեցաւ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ:

● Դէ. 19 Սեպտ. — Կ. ա. Ժամը 11.30-ին, Գեր. Տեղապահ Ս. Հօր այցելեց տեղայոյ Ամերիկան Ընդհանուր Հիւրաստուն Տարակացութեամբ իր ժոխանորդ Մր. Rootի:

● Դէ. 25 Սեպտ. — Կ. ա. Ժամը 9ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Ընկերակցութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեանի, Տնօրէն Ժաղավոյ անզամ Հոգ. Տ. Պարզի Վազ. Վրթանէսեանի, Ցոպպէի Վանուց Տեսուչ Հոգ. Տ. Բարզէն Վրզ. Ազատեանի և Կալուածական Քարտուզար Տիւր Կարպի Հինգիեանի, Նոր Երուսաղէմ մեկնեցաւ զրազիւս կալուածական խոզիրներով և տաւու համար իր անզը անիկ եպիսկոպոսական այցելութիւնը հարցելանայ գաղութին, և վերազարձաւ էլ. Հակո. ի Կ. ա. Ժամը 9ին:

ՀԱՆԳԻՍ

ԳԵՐ. Տ. ԱՐՏՈՒՐՉԱԶԴ Ս. ԱՐԹԵՎՈՅ. ՍԻՒՐՄԷԵԱՆԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՅ

Ամենադառն յուզումով ու բեկումով վերահասու եղան Ս. Սթոռոյ Գեր. Տեղապահ Արքազանն ու բովանդակ Միարանութիւնը Նորին Արքազնութեան մահուան գոյժին, որ տեղի ունեցած է 27 Սեպտ. 1951-ին Բարիզի մէջ «յետ կարճատեւ հիւանդութեան»:

Անհակնակ մահուան ցաւը աւելի կը խորունկնայ մեր մէջ մանաւանդ այս օրերուն ուր աւելի քան զգալի է հայ եկեղեցական անդաստանին ծեռնահաս եւ փորձառութեամբ լիցուն մշակներուն պակասը. Հանգուցեալ Արքազանը այդ տեսակէտով կը ներկայանայ իրբեւ տէրը բազմազիմ արքէքներու թէ հոգեւորական եւ թէ մտաւորական կալուածներու մէջ: Կուտանը իր կինսագրականը օգտուելով մեծանուն զրագէտ Արշակ Զօպանեանի մէկ յառաջարանէն, զետեղուած հանգուցեալ Արքազանին «Թշուառի Զգայութիւններ» հասորին սկիզբը:

Նորին Արքազնութիւնը ծնած է Ակն 18.9-ին, ու զարմիկն էր նահատակ բանաստեղծ Ատոմ Եարճանեանի (Միամանթօ): Իր նախնական ուսումը ստացած է Պոլիս Պատրգէօյի Արամեան Վարժարանին մէջ (1897-1904) եւ ապա աշակերտած Կալվաթայի Ազգային Վարժարանի (1904-1907) ուր եւ իսկ կատարած է իր զրական առաջին փորձերը որոնք հրատարակուած են Արևելք օրաթերթին, «Փունջ» եւ «Մաղիկ Մանկանց»